ԾԱՂԻԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՂՈՑ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

Բ. Շրջան, Թիւ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մրջիւնը	ԱԼՓԱՍԼԱՆ
Հովուորդին (գերմանական հէքեաթ)	ԿՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ
Պզտիկ ձկնորսը (պատկերով)	ԴՐ. Հ. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ
Պօռօն Արքոյի պամաձները (պատկերով)	ԱՐԹՕ
Ժանշօն եւ Ֆանշէթ (պզտիկ՝ թատերախաղ)	Ժ. ԺԱՄԱԹԻ ՔՕԴԼՕ
Մեր հարցումին պատասխան	ԱՏԱՆԱՅԻ ՌԵԲԵԿԱ
Այծին կառքը (պատկեր)	
Գործունեայ տղան	
Թերթօն, Հանելուկ, Հաշուական հարցում, եւլն.	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՅ ԵՒ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան **30** *ղրուշ։ Վեցամսեայ բաժնեգին չկայ։*

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ *Տարեկան* **7** *ֆրանք։*

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ ԿԱՆԽԻԿ

Բաժնեգինները կարելի է ղրկել Օսմ. մանտաքօսթով, փոխ" գրով, եւ կամ դրոշմաթուղթով (20 հատը 20 ղրուշի հաշուով)։

Ծանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի գործառնութեանց համար դիմել մի՛ միայն՝

ՍԱԳԱՅԵԱՆԻ

{زاغيك غزته‌سى} درعليه‌ده غلطه‌ده قورشونلى خانده نومرو ٧

«ԾԱՂԻԿ» ՀԱՆԴԷՍ

Կ. Պոլիս, Ղալաթիա, Գուրշունլու խան, թիւ 7

REVUE "DZAGHIK„

Constantinople, Galata, Kourchoum Han, Nº 7.

Գին 20 փարա Տպագրութիւն ՍԱԳԱՅԵԱՆ, Կալաթա

HYGIÈNE BEAUTÉ

CRÈME SIMON

ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ'ՈՒԶԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԷՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃՇՄԱՐԻՏ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԷՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ կատարեալ չըլլար՝ առանց գոյնի, մաքրութեան։ Բոլոր այն տիկինները որոնք հոգը ունին այս թանկագին ձիրքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն ժամանակին արտադրութիւններուն որոնք չունդալից ռէքլամներով ծախու կը հանուին։ Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներելի կ'ընէ այդքան ժան ծախել զանոնք։ Այս պատճառաւ նուազ ստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օդին մէջ կ'չորնան, և միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կ'ծթռին և քիչ ատենէն առաջ կ'բերեն անդարմանելի կարմրութիւններ և խորշոմներ։

Միայն ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կղիսերոլեով բաղադրուած՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլոր վայելչասէր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բազմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ելլեն ամէն օր։

1900ի տիեզերական Արուեստահանդէսին մէջ արժանացած է Ոսկի Միտալի։

Ի հարկէ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԻ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն և ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն ազնիւ տեսակէ ըլլալն է, որովհետև բոլոր ծախողները կ'խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը չահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ։

Բնաւ մի՛ վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ ՔՐԷՄ ՍԻՄՈՆը, միշտ լաւ ուշադրութիւն ընելով վերի վաճառանիշին և յաւէտ երիտասարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր դրացուհիները պիտի պառաւնան՝ ցաւելով իրենց սխալ խնայասիրութեան վրայ։

Ծաղիկ

Տնօրէն Ս Ա Գ Ա Ե Ա Ն — Խմբագիր Յակոբ Տէր-Յակոբեան

(727) Ի. ՏԱՐԻ — ԹԻՒ 3 — 29 ՄԱՅԻՍ 1908

ՄՐՋԻՒՆԸ

Հերկելէ դարձող կովի մ'եղջիւրին
Վրան թառած էր մէկ մրջիւն ։
Քոյրն հարցուց. — «Ո՞ւրկէ կու գաս, և այդպէս
Բարձրերն ելած ի՞նչ կ'ընես»։
—«Ո՞ւրկէ կու գամ, ըսե՛մ, քուրիկդ իմ տըղէտ.
Հո՛ղն հերկելէ, կովի՛ն հետ . . . ։»

Թրգմ. ԱԼՓԱՍԼԱՆ — Թ. ՎԻԼԼԷԹ



ՀՈՎՈՒՈՐԴԻՆ

(Գերմանական պատմուածք)

ԱՏԵՆՈՎ հովիւ տղայ մը կար, որ մեծ հռչակ հանած էր իր իմաստուն պատասխաններով, զորս կու տար՝ իրեն ուղղուած ամէն հարցումի։ Երկրին դուքսը կը լսէ անոր նկատմամբ, բայց չհաւատար. ուստի տղան կանչել կու տայ ու կը հարցնէ անոր.

—Կրնա՞ս պատասխանել այն երեք հարցումներուն, զորս հիմայ քեզի պիտի ուղղեմ. եթէ յաջողիս, այն ատեն իմ հարազատ զաւակիս տեղը պիտի դնեմ քեզի և ինծի հետ՝ իմ դղեակիս մէջ պիտի բնակիս։

Տղան կը հարցընէ. «Որո՞նք են այդ երեք հարցումները։»

Դուքսը կը պատասխանէ. «Առաջինը սա է. քանի՞ կաթիլ ջուր կայ ովկէանոսին մէջ։»

— Տէ՛ր դուքս, (կը յարէ տղան) երկրի բոլոր գետերուն բերանները խցել տուէք նախ, որպէս զի դեռ չհամրած, պուտ մը անգամ ծովը չթափի, այն ատեն կ'ըսեմ ձեզի թէ ծովուն մէջ քանի՞ կաթիլ ջուր կայ։

Դուքսը կ'ըսէ. — «Երկրորդ հարցումը հետեւեալն է. քանի՞ լուսաւոր կայ երկնակամարին վրայ»։

Հովուորդին խոշոր թերթ մը ճերմակ թուղթ կ'ուզէ. յետոյ գրիչով ա՛յնքան նրբին կէտեր կը՝ չինէ հոն որ հազիւ կը տեսնուէին և դրեթէ անկարելի էր համրել զանոնք և վրան նայուած ատեն մարդուն աչքերը կը դառնային։ Այնուհետեւ կը յարէ. —«Երկինքի վրայ ա՛յնքան լուսաւոր կայ, որքան կէտ՝ այս թուղթին վրայ. միայն թէ համրեցէ՛ք զանոնք»։

Բայց ո՛չ ոք կարող էր համրել։

Դուքսը կ'ըսէ. — «Երրորդ հարցումն ալ սա է. քանի՞ երկվայրկեան ունի յաւիտենականութիւնը։»

Այն ատեն տղան կը պատասխանէ. — «Մեր գիւղը լեռ մը կայ, որուն բարձրութիւնը մէկ ժամ կը տեւէ, լայնութիւնը՝ մէկ ժամ և խորութիւնը՝ մէկ ժամ. հարիւր տարին մէկ անգամ թռչնիկ մը կու գայ այդ լերան վրայ և փոքրիկ կտուցը կը սրէ անոր կատարին քսելով. և երբ այս կերպով ամբողջ լեռը մաշի ու հատնի, ահա այն ատեն յաւիտենականութենէն մէ՛կ երկվայրկեան անցած է։»

Դուքսը կ'ըսէ. «Երեք հարցումներուն ալ իմաստութեամբ պատասխանեցիր, ուստի այսուհետեւ ինծի հետ իմ դղեակիս մէջ պիտի բնակիս և ես իմ հարազատ զաւակիս տեղը պիտի դնեմ քեզ։

Թարգմանեց՝ ՊՕՂՈՍ ՊԱՅԵՕԶԵԱՆ

ԿՐԻՄ ԵՂԲԱՑՐՆԵՐ

ՊԶՏԻԿ ՁԿՆՈՐՍԸ

Աղուոր, պզտիկ դուք ձուկեր՛,
Որ կը կայտռէք վըտառով,
Ձեզ կը թափեմ ահա կեր,
Հոս եկէ՛ք, հոս խմբին քով։

Ջուրերու մէջ ջինջ, յըստակ՝
Երբ կը լողաք նետի պէս,
Նստած մօտի ծառին տակ՝
Պիտի ձեզի դիտեմ ես։

Ահա կարթս ալ պզտլիկ,
Ծայրը խայծով մը համեղ,
Բերած եմ որ հանդարտիկ
Որսալ փորձեմ ձեզ այս հեղ։

Մեծերու պէս ագահ չեմ
Զեղ ամէնքդ ալ որսալու,
Քանի մը հատ լոկ կ'ուզեմ,
Իմ մայրիկիս տանելու։

Երբ որ ձեզմէ մէկ քանին,
Շարած չիւղի մը վերայ
Տանիմ տունը մայրիկին,
Արդեօք ո՞րչափ գոհ կըլլայ։

Աղուոր, ոսկի դուք ձուկեր,
Որ կը լողաք վրատառով,
Զեզ կը թափեմ ահա կեր,
Հո՛ս եկէ՛ք հոս լիմին քով։

ԴՐ. Հ. ԴԱԼՕՒՍՏԵԱՆ

"ԾԱՂԻԿ,,Ի ԱՄՍԵԱՅ ԲԱՑԱՌԻԿ ԹԻՒԸ

Ինչպէս անցած շաբթու ծանուցած էինք, Ծաղիկ իր շաբաթական թերթերը շարունակելով հանդերձ, իւրաքանչիւր ամիս ալ պիտի հրատարակէ բացառիկ ճոխ թիւ մը որ իր տեսակին մէջ միակը պիտի ըլլայ։

Այս բացառիկ թիւերուն առաջին պրակը, Յունիսի թիւը, հրապարակ կ'ելլէ առաջիկայ շաբթու խիստ շահեկան և պատկերազարդ բովանդակութեամբ։ Իր նիւթերը մասնաւոր խնամքով ընտրուած են, և կը դառնան հետաքրքրական պատմութիւններու, արկածներու, գիւտերու և ժողովուրդներու բարքերուն վրայ։ Այնպէս որ Ծաղիկի ամսեայ թիւը ո՛չ միայն հետաքրքրական այլ նաև մեծապէս օգտակար գործ մըն է, ամէ՛ն տարիի եւ ամէ՛ն դասակարգի համար հաւասարապէս։

Այս բացառիկ ճոխ թիւին գինն է 3 ղրուշ։ Իսկ վեց թիւի համար բաժանորդ կ'ընդունուի 15 ղրուշի։ Դրամը պէտք է նամակաղրոշմով կամ մանտաթոսթով ղրկել Ծաղիկի հասցէին։

ՊԱՐՈՆ ԱՐԲՈՅԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

Հետեւեալ օրը, ճաշէն առաջ, հայրիկս զիս կանչել տուաւ և ըսաւ.

— Արթօ, քանի որ Ծաղիկի Տնօրէնը կը կարծէ որ քու պատմածներդ իր ընթերցողները պիտի զբօսցնէ, կ'արտօնեմ որ դրես. միայն թէ բուն անունդ և մականունդ չպիտի դնես. այն տեղն հետդ գործ կ'ունենամ...։ Հայրիկը քիչ մը նեղսիրտ է, բայց հայրիկներուն ամէնէն աղէկն է։ Իր այս կարճ ճառը ինծի չսարսափեցուց, որովհետև անհնազանդ չպիտի դտնուէի իրեն։ Ասկէց զատ այնչա՞փ ուրախ, այնչափ հպարտ էի որ...։ Տասնըչորս տարու եմ և ահա՝ պաշտօնակից պիտի ըլլամ ծանօթ բանաստեղծներու և դրողներու. ինքզինքս կը տեսնէի մե՛ծ դրագէտ մը և Իզմիրեանց դրական յանձնաժողովի անդամ։

Աւա՜ղ. շատ շուտ այս հաճոյքս քիթէս ըերնէս եկաւ։ Յօդուած մը դրելը՝ շարադրութիւն մը ընելէ տարբեր բան է. գիտէի որ թուղթին մէկ կողմին վրայ միայն պիտի դրէի. բայց ի՛նչպէս սկսէի։ Արդեօք իմ ընթերցող բարեկամներս չպիտի՞ ծաղրէին ինծի...։ Մէկ խօսքով, այնքան մեծ մտահոգութեան մը մէջ ինկայ որ գիշերը սոսկալի բանդագուշանքի մը ենթարկուեցայ։ Երազիս մէջ տեսայ որ Ծաղիկի բոլոր կարդացողները — և տէր Աստուած ո՛րչափ ալ շատ — դիւային պար մը կը դառնային անկողնիս շուրջ, և անցած ատեններին ինծի կը նետէին, մէկը լիմոնի կեղեւ մը, ուրիշ մը՝ լոլիկ մը, միւսը շողգամ մը, կաղամբի կտորներ, պըրասի աւելորդներ՝, որոնց տակ կ'ընկղմէի ես։ Կը խեղդուէի, կը տապլտկէի, ու չէի՛ կրնար ազատիլ։

Ճիչ մը արձակելով արթնցայ և այդ վայրկեանին մտա-

հոգութիւնս սկսաւ աւելի ծանրանալ։ Ասոր հետ մէկտեղ, պէտք է աշխատիլ. ահա կէս դիշեր էր և տակաւին կ'աշխատէի. հայրիկը չի լսէ։ Ի՞նչ եղաւ հիմա. յօդուածս գրուեցա՞ւ. բայց ահա արդէն հրատարակուած է Ծաղիկի մէջ։

Շատ մը պատմութիւններ ունիմ ձեզի համար, բայց ուրիշ ատեն։

ԱՐԹՕ

ՖԱՆՇՕՆ ԵՒ ՖԱՆՇԷԹ

(Պզտիկ բատերեսխաղ երկու հոգիով)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ(*)

(Ֆանշէթ մուր գոյն վերարկուի մը մէջ փաթթուածկը պտըտի դողդղալով։ Ֆանշօն կը շտկէ իր սենեակը, փայտ կ'առնէ վառարանը վառելու համար)։

Ֆանշէթ.— Որքա՜ն ցուրտ է, ինչպէ՞ս հովը կը փչէ։ Ձիւնը կը տեղայ ու կը տեղայ, (տխրութեամբ պատուհանին կը նայի). կը մսիմ, անօթի եմ և ուտելիք չկայ, ոչ...։

Ֆանշօն.— Ահա վառարանը որ կը ճարճատէ, ձիւնը կրնայ տեղալ, ես հոս լաւ եմ, լաւ. ահա՛ ամէն բան կարգին է, կերակուրը կը տաքնայ, գործի սկսինք մինչև որ տաքնայ։ (կը նստի իր աշխատութեան սեղանը) ո՜հ, որքա՜ն հանգիստ եմ իմ տանս մէջ։ (Կ'երգէ դարձեալ) ա՜հ, ա՜հ դրացուհի՛ս, այլևս մտիկ չես ըլլուիր, ո՞ւր են երգերդ, ո՞ւր է խօլ զուարթութիւնդ։

Ֆանշէթ.— Հիմայ Ֆանշօնն է որ կ'երգէ։ Որքա՜ն զուարթ է։ Իր սենեակը լաւ ըլլալու է։ Սա դրան մօտենանք...։ (Ականջը կը դնէ միջնորմի դրան) վառարանին ճարճարտիւնը կը լսեմ... երջանիկ է։ Արդեօք ասպնջականութիւն խնդրե՞մ անկէ. բայց ո՛չ, դիս պիտի ճամբէր, դիս կ'արհամարհէ...։

Ֆանշօն.— Ամառը ո՛րքան շուտ անցաւ...։ Զայն չվայելած անցաւ, արեւը պահուըտած է, տերեւները թափած, ծաղիկներն ալ թարշամած...

(*) Առաջին արարուածը տեսնել անցած թիւին մէջ։

Ֆանշէք (դրան կրթնած).— Առանց սակայն այս հրաչալի բաները վայելած ըլլալու...։

Ֆանշօն (յանկարծակիի եկած).— Իրաւ է, ես զանոնք չեմ տեսած, անձրև կամ արեւ, ինծի համար ամէն ատեն միեւնոյնն է։

Ֆանշէք.— Բայց դուն չե՞ս մսիր, անօթի չե՞ս։ Ես անօթի եմ (կու լայ)։

Ֆանշօն (դրան մօտենալով).— Կարծես մէկը կու լայ...։ Ա՜հ, ա՜հ, օրիորդ Ֆանշէթ, շատ լաւ է, չուզեցիր աշխատիլ և հիմա դժբաղդ ես։ Տաք ատենները ի՞նչ կ'ընէիր։

Ֆանշէք (դրան եզերքն լալկան ձայնով մը).— Կ'երգէի։

Ֆանշօն.— Կ'երգէի՞ր (խնդալով) հա՛, հա՛, հա՛... լաւ, պարէ հի...։ (Ընդհատելով) կեցի՛ր, ժամանակ մը իմ սորված մէկ առակիս պէս է... այո, բոլորովին ան։ Ֆանշէթը ճպուռն է և ես՝ Ֆանշօնը, մրջիւնը, աշխատասէր, նախազգոյշ մրջիւնը։

Ֆանշէք (միշտ տրտում) Այո, փոխ չտուող...։

Ֆանշօն.— Ի՞նչ կ'ըսէ, փոխ չտուո՞ղ։ Ես չեմ կրնար ծոյլերուն համար աշխատիլ... այսպէսով արդէն բաւական հոգ ունիմ։

Ֆանշէք (լալով).— Կը մսիմ, անօթի եմ։

Ֆանշօն (խանդաղատած).— Խե՛ղճ ճպուռ... (խստութեամբ) վա՛յ, ամո՛թ անգործներուն։

Ֆանշէք (դողդղալով) կը մսիմ...

Ֆանշօն.— Այո, դուրսը ցուրտ է, հոս տաք է։ Մրջիւնը շատ աշխատած է, որով ձմեռը երջանիկ է։ Երջանի՞կ, մարդ երջանի՞կ է երբ իր քով լալը կ'իմանայ... բայց և այնպէս մրջիւնը շատ իրաւունք ունէր վռընտելու ճպուռը, անոր դաս մը տալը անհրաժեշտ էր...։

Ֆանշէք.— Ո՜հ, ո՛րքան անօթի եմ, ո՛րքան կը մսիմ։

Ֆանշօն (յուզուած).— Սակայն և այնպէս, մրջիւնը բարեսիրտ չէ...։ Ժամանակ մը բնաւ չէի սիրեր զայն... բայց... ես եմ այս ստորին մրջիւնը...։ Ե՞ս ալ արդեօք պիտի նմանիմ այս սոսկալի սեւ կենդանիին։ Օ՜հ, ո՛չ ոչ։ (Միջնորմին դուռը կը զարնէ) Ֆանշէթ, Ֆանշէթ, եկո՛ւր, եկո՛ւր, չո՛ւտ, տաքցիր։

Ֆանշէք (եղեղով).— Ձի՞ս կը կանչէ։

Ֆանշօն.— Այո Ֆանշէթ, չուտ եկո՛ւր, քաչէ պարզունակը քու կողմէդ, ես ալ իմս պիտի բանամ։ (դուռը կը բացուի)։

Ֆանշէք.— Ո՜հ, շնորհակալ եմ, շնորհակալ...։

Ֆանշօն.— Խեղճ Ֆանշէթ։ Բայց սառեր ես։ Ո՞րքան գունատ ես։ Անօթի ես, եկո՛ւր ինծի հետ պիտի ճաշես...։

Ֆանշէք (վերարկուն հանելով).— Ի՞նչ աղուոր է քու սեն-

եակդ։ Մաքուր և կանոնաւոր ես, ինչպէս ամէն բան կը փայլի... որքա՜ն երջանիկ ես Ֆանշօն։

Ֆանշօն.— Երջանի՞կ։ Այո, ինծի միայն կը պակսի... զուարթութիւնը։

Ֆանշէր.— Տխո՞ւր ես, ինչո՞ւ։

Ֆանշօն.— Ինչո՞ւ, չեմ գիտեր։

Ֆանշէր.— Քեզի պէտք եղած բաներ ունիս, լաւ կրակ մը, լաւ կերակուր մը՝ համով հոտով։

Ֆանշօն (երազկոտ).— Ճիշդ է։ Բայց մինակ եմ և ո՛րքան կը յոգնիմ։ Եթէ գէթ կարենայի աշխատած ատենս խնդալ, խօսիլ, երգել քեզի պէս...։ Ֆա՛նչէթ, միտքս բան մը ինկաւ, կ՚աղաչեմ, իրարու հետ կենանք։ Մինչդեռ ես պիտի աշխատիմ, դուն պիտի չաղփաղփես, զիս պիտի զուարճացնես, պիտի երգես, կ՚ուզե՞ս։

Ֆանշէր (երջանիկ).— Այո՛, կ՚ուզեմ, բայց չեմ գիտեր թէ պարտաւո՞ր եմ...։

Ֆանշօն.— Այո՛, այո, տե՛ս, արդէն քուբաց գոյն չրջազգեստդ զուարթութիւն սփռեց հոս։

Ֆանշէր.— Մ՚հ, որքան բարի ես։ Բայց ես արժանի չեմ այս երջանկութեան...։

Ֆանշօն (զուարթ).— Կարգադրուեցաւ։ Քակենք այս միջնորմը։ Արեւը բնաւ հոս չի մտնար, ինչ որ զիս կը տխրեցնէ, քու պատուհանէդ մինչև ինծի պիտի գայ։

Ֆանշէր.— Բարի մրջիւն, օ՛ն, բայց ես քեզի պիտի օգնեմ, Ֆանշօն, յանձնարարութիւններդ պիտի կատարեմ, պիտի աւլեմ, նոյն իսկ պիտի աշխատէի... եթէ գիտնայի։

Ֆանշօն.— Կեցցէ՛, ճպուռը պիտի զուարթացնէ մրջիւնը։

Ֆանշէր.— Այո, բայց պէտք է որ ճպուռը Քիչ մը մրջիւն ըլլայ և...

Ֆանշօն (ընդմիջելով).— Եւ մրջիւնը՝ քիչ մը ճպուռ...։ Իրաւունք ունիս, քեզի աշխատիլ պիտի սորվեցնեմ։

Ֆանշէր.— Ես ալ քեզի երգել պիտի սորվեցնեմ։

(Միասին կ՚երգեն)

Անտառին մէջ արտոյտը ժիր
Անոյշ ձայնով կ՚երգէ գարուն,
Շիկահաւին հետ եռանդուն,
Որ միշտ խաղի ընկերն է իր.
Մինչդեռ համեստ մեր մանուշակ
Մտիկ կ՚ընէ երգն անուշակ,
Մարգարի՛տն ալ, ծաղիկ սիրուն
Փայլ մը կու տայ թաւ խոտերուն։
Ա՜հ, ա՜հ, ա՜հ։

Թարգմ. Ա.

Ժ. ԺԱՄԱԹԻ ԳՕՊԼՕ

— Տի՛ն, այծուկս, տի՛ն. Ջմենք մայիս կը տանինք մեր մայրիկներուն...

ՊԶՏԻԿ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՇԿԻՆԱԿԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Առաջին թաշկինակը ասկէց 350 տարի առաջ Եւրոպա մտաւ։ Մտցնողը Վենետիկցի կին մըն էր։ Ուրեմն արդի կեանքին մէջ ամենէն կարեւոր մէկ իրը կազմող թաշկինակին ծագումը իտալական է։ Ամէնէն առաջ Ֆրանսայի մէջ տարածուեցաւ։ Այն ատենի թաշկինակները շատ գեղեցիկ և սուղ կերպասներէ կը շինուէին և ամենամեծ զարդի մը տեղը կը բռնէին։ Ֆրանսայի Հանրի Երրորդ թագաւորին օրով (1574էն 1589), թաշկինակներուն անուշ հոտ քսելը նորաձեւութիւն եղաւ։ Թաշկինակը 1580ին տարածուեցաւ Գերմանիոյ մէջ։ 1595ին կանոնագիր մը հրատարակուեցաւ, որով կը յայտարարուէր թէ հարուստները միայն պէտք է թաշկինակ գործածեն, հետեւաբար պարզ ժողովուրդը պէտք չէ գործածէ։ Այդ ժամանակէն ի վեր թաշկինակը կամաց կամաց տարածուեցաւ և հասաւ արդի վիճակին։

ՎԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԸ

Ֆրանսերէն թերթ մը կ'ըսէ թէ վիմագրութեան, այսինքն քարի վրայ փորագրութեամբ տպագրութեան առաջին մեքենան ասկէց դար մը առաջ շինուած է։ Վիմագրութեան հնարիչն է Միւնիխցի Շնէֆէլտր անուն գերման մը։ Այս մարդը 1796ին գտաւ թէ կրային քարերը՝ մութ գոյն մելանը իրենց վրայ կը բռնեն, և երբ թուղթ մը ճնշուի քարին երեսը, այն ատեն մելանին պատկերը թուղթին վրայ կ'ելլէ։ Սակայն Շնէֆէլտրը իր այս գիւտին կարեւորութիւնը չի գնահատեց, և մինչև որ այդ գիւտը գործադրուեցաւ, քանի մը տարի անցաւ։

"ԾԱՂԻԿ,,Ի ՀԱՐՑՈՒՄԸ

Մեր թիւ 1 թերթին մէջ հարցում մը ուղղած էինք մեր դեռատի ընթերցողներուն և ընթերցուհիներուն, իբր հաճելի ժամանց մը։ Խոստացած էինք հրատարակել կարճ և սիրուն պատասխանները։ Հոս կը դնենք հարցումը, առիթ տալու համար ուրիշներուն ալ որ անով զբաղին և պատասխանեն.—

«Ո՞ր տարիքը կը սիրէք և ինչո՞ւ։ Այսինքն տարիքով պզտի՞կ ըլլալ կ'ուզէք, միշտ մանուկ ու զբօսասէ՞ր, թէ աւելի մեծ, օրինակի համար պատանի, երիտասարդ կամ չափահաս։ Մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան ու չափահասութեան մէջ ո՞րը կը նախընտրէք ըլլալ և ինչո՞ւ»։

Ահաւասիկ մեզի հասած պատասխաններէն մէկը.—

×

Կ'ուզեմ ես ալ տալ անխափան,
Ձեր հարցումին մէկ պատասխան։

Մանկութիւնն է ինձ հաճելի,
Անմեղութեան բուրումով լի.
Ծաղկի կոկոն մըն է գարնան՝
Տեսքով զուարթ և աննման։

Զուարճասէր, խելօք կամ չար
Ան միշտ կ'ըլլայ անյիշաչար,
Շուտ կը մոռնայ ցաւ, արտասուք
Զունի յուշքեր, ո՛չ խեթ, ոչ սուգ։

Թռչնիկ մըն է յար ոստոստուն,
Կ'երթայ կու գայ դպրոց և տուն,
Երբ ծնողքին անսայ ինք միշտ
Զառթեր անոնց սրտմաշուք, վիշտ։

Սակայն ասոնք չեն լոկ պատճառ
Որ մանկութեան տամ սէր անճառ.
Այլ, որպէս զի՝ մի՛շտ անբաժա՛ն
Մնամ՝ մօրմէս իմ սիրական։

Բեռա

ԱՏԱՆԱՅԻ ՌԵԲԵԿԱ ԿՈՄԻՏԱՍԵԱՆ
Ուսանողուհի Իսահակեան վարժարանի

ՊԶՏԻԿ ՏՂՈՅ ԿԵԱՆՔԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵԱՅ ՏՂԱՆ

Կեցցէ՛ այն տղան որ գործունեայ է. միշտ պատրաստ աղէկ աշխատելու և զբօսնելու։

Ալիքսան գուցէ քիչ մը շատ եռանդ ունի, բայց ես ասիկա թուլութենէն շատ աւելի կը սիրեմ։ Պէտք չկայ որ բան մը երկու անգամ ըսէք անոր. իսկոյն աշխատելու կ'սկսի եռանդով և ուշադրութեամբ։

Ալէքսան իր պարտականութիւնը միշտ կը լմնցնէ իր ընկերներէն առաջ և ամէնէն աղէկը կը կատարէ։ Միւսներէն աղէկ գիտէ իր դասը, որովհետև սովրելու աւելի շատ ժամանակ ունի։ Հետեւաբար, մրցանակներ ալ կ'ստանայ։

Ի՞նչ մեծ տարբերութիւն կայ Ալիքսանի և Արսէնի միջև։ Անոնք երկուքը մէկ սկըսած են կարդալ գրել սովրիլ. բայց Ալիքսան արդէն կարդալ գրել գիտէ, բայց Արսէն —թո՛յլ տղան— բնաւ առաջ դացած չէ։

Ամէն տղայ Ալիքսանին պէս ըլլալու է, եռանդուն ու աշխոյժ։ Պիտի տեսնէք որ վաղը երբ Արսէն շատ շատ ծառայ մը պիտի ըլլայ, Ալիքսան ընդհակառակը շէնք շնորհք դիրք մը պիտի չունի իրեն, քանի որ աշխատելու, գործելու փափաք ունի, և կ'աշխատի ու կը գործէ։ Եռանդը մարդուս բարոյական ուժն է։ Ո՛վ որ եռանդ ունի մարմինով ալ առողջ կը համարուի։

ՊԻՍԱԿՈՒԱԾ ԿԱՊԸ

(ԱՆԳԼԻԱՑԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՈՍՏԻԿԱՆ
ՇԼՐԼՕԹ ՀՕԼՄՍԻ ԱՐԿԱԾՆԵՐԻՆ)

Ներս մտնող մարդը մէյմը ինծի նայեցաւ մէյ մը Հօլմսին։ Խոռունկ աչքեր և ցցուած քիթ մը ունէր՝ գիշատիչ թռչունի մը պէս։ «Ձենէ ո՞վ է Հօլմսը» հարցուց այս արտակարգ մարդը։

— Ես եմ պարոն։ Բայց արդեօք որո՞ւ հետ պատիւը ունիմ տեսնուելու։

— Ես տօքթօր Բօյլօթ կը կոչուիմ, Սթօք Մօրանէն։

— Իրա՞ւ (ըսաւ Հօլմս քաղցր չեչտով մը) խնդրեմ նստեցէք։

— Իմ խորթ-աղջիկս հոս եկաւ. իր եղբէն եկայ։ Ըսէ՛ք, ի՞նչ պատմեց ձեզի։

— Սոսկալի ցուրտ կ'ընէ (ըսաւ Հօլմս՝ անտեղուանքը չբլլալով)։

— Ի՞նչ ըսաւ ան ձեզի (պօռաց ծերունին զայրացած)։

— Բայց լսեցի որ այս տարի քրքումները (սաֆրան) աղէկ պիտի ըլլան...

Հօլմսի այս անայլայլ խօսքերուն վրայ մեր այցելուն քայլ մը առաջ եկաւ խարազանը երերցնելով և գոչեց «հա՛, հա, չէ՞ք ուզեր ինծի պատասխանել։ Բայց ես ձեզի կը ճանչնամ։ Ձեր վրայ բաներ լսած եմ. դուք Հօլմսն էք»։

Բարեկամս խնդաց։ Ասոր վրայ մարդը կատղած աւելցուց.

— Հօլմս մարդ մըն է որ իրեն պէտք չեղած գործերուն մէջ քիթը կը խօթէ։ Հօլմս՝ կոչիկ ներկո՛ղ մըն է...

Հօլմս որ միշտ կուչտ կուչտ կը խնդար, յարեց,

— Ֆէյֆիս կ'երթաք։ Միայն թէ կը խնդրեմ որ երբ մեկնիք, դուռը գոցէք, քանի որ օդի հոսանքի մը մէջ մնացինք։

— Խօսքերուս տոպրակը չպարպած չպիտի երթամ։ Կը հասկըՆա՞ք. դուք իմ գործերուս չպիտի խառնուիք։ Գիտեմ որ խորթաղջիկս հոս եկաւ. ես զայն լրտեսեցի։ Ես վտանգաւոր մարդ մըն եմ ինծի ընդդիմացողներուն համար։ Նայեցէ՛ք։

Արագ առաջ եկաւ, իր թուխ լայն ձեռքով բռնեց բուխերիկը խառնելիք երկաթը, զայն երկուքի ծալլեց և բուխերիկին մէջ նետելով, մեծաքայլ դուրս ելաւ ոռնալով. «զգուշացէ՛ք ուրեմն»։ Հօլմս, ասոր վրայ ժպտելով ըսաւ.

— Շատ սիրուն մարդ մը կ'երեւի։ Իրաւ՝ իրեն չափ խոշորկեկ չեմ բայց քիչ մըն ալ երբ կենար, կրնայի իրեն ցուցընել որ իմ ձեռքերս ալ իրմէ վար չեն մնար։

Ասոր վրայ առաւ պողպատէ երկաթը և մէկ հարուածով չըտկեց զայն։ Ետքը աւելցուց.

— Այս միջադէպը աւելի կը հրապուրէ դործը. կը յուսամ որ մեր բարեկամուհին չպիտի վնասուի՝ հետապնդուած ըլլալուն համար։ Հիմա ես պիտի երթամ Բժիշկներու Ընկերակցութեան սենեակը ուրկէ կարդ մը օգտակար տեղեկութիւններ պիտի քաղեմ։

Ժամ մը ետք Հոլմս եկաւ ձեռքը կապոյտ թուղթ մը բռնած՝ որուն վրայ թիւեր և ծանօթութիւններ լեցուած էին։ Հոլմս ըսաւ.

— Հանգուցեալին կտակը տեսայ։ Կ'ըսէ թէ իր հարստութիւնը կը թողու իր երկանը, պայմանաւ որ իր աղջիկները երբ ամուսնանան 250ական ոսկի թոշակ ստանան։ Ցայտնի է որ երբ երկուքն ալ ամուսնանային, այն ատեն տօքթօր Բոյլօթ խեղճ ու կրակ պիտի մնար առանց տասը փարայի. նոյն իսկ մէկին ամուսնութիւնը խոշոր ծակ մը պիտի բանար իր հարստութիան մէջ։ Հետեւաբար այս խորթ-հայրը դօրաւոր պատճառներ ունի ամուսնութիւնները արգիլելու։ Օ'ն, ելիր երթանք. միայն թէ հրազէն մը դիր գրպանդ. երկաթի ձողը երկուքի ծալլող մարդուն դէմ առանց զէնքի կարելի չէ կենալ։ Ակռայի խոշոնակ մըն ալ առ ու մեկնինք։

Կառքով Վաթէրլօ կայարանը դացինք, կառախումբ նստեցանք, ելանք Լիթէրհիտ և դարձեալ կառք մը մտանք որ սկսաւ երթալ սիրուն ճամբաներէ։ Հոլմս, թեւերը ծալլած ու թուչը կուրծքին վրայ, մտածումներու մէջ թաղուած էր։ Ցանկարծ դոզաց, ուսիս զարկաւ և մատովը ցոյց տուաւ ծառախիտ պարտէզ մը որ թեթև զարիվարի մը վրայ հաստատուած էր, և անտառակի մը կը նմանէր։ Տերեւներուն մէջ կը տեսնուէին գորշ աղաւնիներ, և շատ հին բնակարանի մը բարձր կատարը։

— Սթօք Մօրա՞ն է հոս կառապա՛ն։

— Այո պարոն. տոքթ. Բոյլօթի տունն է այդ։

— Հոն նորոգութիւններ կը կատարուի. հոն պիտի երթանք։

— Ահա գիւղը (ըսաւ կառապանը ձախակողմը քիչ մը հեռու տանիքներու խումբ մը ցուցնելով) բայց երբ կուզէք տունը երթալ, աւելի շուտ կը հասնիք երբ սա մուտքէն անցնիք, դաշտին շուրջի նեղ ճամբուն հետեւելով. հոն ուր կին մը կը պտտի։

Հոլմս ձեռքովը աչքը պատսպարելով նայեցաւ ու ըսաւ «կարծեմ այդ կինը Միս Սթօնրրն է»։ Կառքէն իջանք, վճարեցինք և կառապանը մեկնեցաւ Լիթէրհիտ։ Հոլմս ուզած էր կառապանին այնպէս ցոյց տալ թէ հոս իբր ճարտարապետ, որոշ աշխատութեան մը համար կու գայինք, որպէս զի բամբասանքի առիթ չտայ։ Անցանք մուտքը և մօտեցանք Միս Սթօնրրի, որ ուրախ դէմքով մեզի դիմաւորելու փութաց։ Հոլմս ըսաւ.

—Բարե՛ւ օրիորդ, կը տեսնէ՛ք որ մեր խօսքին հաւատարիմ ենք։

(Շարունակելի)

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

Հանելուկ թիւ 3

Հետեւեալ հինգ կարգի բաժնուած կէտերուն տեղ դրէք մէյմէկ տառ, այնպէս որ թէ՛ վերէն վար և թէ աջէն ձախ միեւնոյն բանը կարդացուին.

Ս . . . Կ		Մարդու անուն
. . . . .		Պտուղ մը
. . . . .		Հայր մը
. . . . .		Աղգ մը
Կ . . . Ի		Թռչուն մը

Հաշուական հարցում թիւ 3

160 ղրուշ բաժնուեցաւ 5 մարդոց որոնց իւրաքանչիւրը իրմէ առաջինէն 4 ղրուշ պակաս առաւ։ Ի՞նչ էր իւրաքանչիւրին բաժինը։

Լուծողներէն երկուքը վիճակով պիտի ստանան մէյմէկ գիրք։

Պատասխանները պէտք է գրել կողքին եռեւի մեր սովորական կտրոնին վրայ։

Թիւ 2 հանելուկին լուծումն է.

16 = Այբուբենի 16րդ գիրն է Հ։
1 = Առաջին գիրը՝ Ա։
33 = 33րդ գիրը՝ Ց։ Որով կը կազմուի Հաց։

Թիւ 2 հաշուական հարցումին պատասխանն է.—

Դրամը բաժնուեցաւ հինգ հոգիի։

Ճիշդ լուծողներն են.—

Պէշիկթաշի Ազգ. վարժարանէն՝ Դ. Պօռուճեան, Ա. Գազազեան, Սիրվարդ, Վարդ, Ց. Մարտիկեան, Զօփուրեան եղբարք, Ց. Ունճեան, Հ. Դանիէլեան, Վ. Փափազեան, Ս. Փափազեան,

Կ. Զիթճեան, Հ. Փիլթոֆճեան, Ե. Թուլումպաճեան, Ա. Պոյաճեան, Հայկազն, Լ. Խանճեան, Լ. Մատթէոսեան, Ժ. Եաղմաճեան, Գ. Պաղտասարեան, Ց. Միրիճանեան, Ց. Գուլլուեան, Ա. Սուճուքճեան, Զ. Ըրկատպաշեան, Խ. Զալկըճեան, Վ. Այվազեան, Թ. Բիւրքճեան, Լ. Թաթարեան, Հ. Պողոսեան, Ա. Սարգիսեան, Ա. Սարրաֆեան, Ս. Շահպէնտէրեան։ Բերայի Էսաեանեանք՝ Հ. և Ս. Մրտիկեան, Կ. Վէզիրեան, Գ. Դարբինեան, Ա. Եաղուպեան, Ատանացի Ռեբեկա, Հ. Կիւլիւնեան, Ա. Խաչատուրեան, Գ. Մուրատեան, Հ. Դասպարեան, Ս. Գանթարճեան, Ռ. Ադամեան, Զ. Միքայէլեան, Ռ. Շահմիրեան, Պ. Բարեկամեան, Ռ. Երեցեան, Ա. Փափազեան, Ե. Մրտիկեան, Մ. Բէքմէզեան, Վ. Յովհաննէսեան, Ս. Շանարեան, Թ. Դաբանմանեան, Ն. Թորիկեան, Մ. Թիւլպէնտճեան, Զ. Լուսարարեան, Գ. Բէօսէեան։ Վիեննական Մխիթարեանք՝ Ն. Դէօմիւրճեան, Բ. Ճիզմէճեան, Պ. Մէրճիմէքճեան, Ա. Ճինճեան, Ս. Ոսկիանեան, Հ. Սուրէնեան, Ն. Եաղուպեան։ Օրթագիւղք՝ Տ. Փանոսեան, Հ. Աղարեան, Լ. Վարդավառեան։ Սամաթիայք՝ Ա. Դալֆաեան, Ց. և Ժ. Համբարձումեան։ Տէմիրեան վարժարանք՝ Գ. Պագալեան, Վ. Ցնտրքլեան, Մ. Տէմիրեան։ Մագրի գիւղք՝ Գ. և Ա. Խանամիրեան։ Պէրպէրեանք՝ Հ. Դալֆաեան։ Նիկողոսեանք՝ Մ. Նուազվեցկղոսկրեան։ Դաբը գիւղի Բոյրերու վրժ.ք՝ Ա. Էնֆիյէճեան։ Ենի Մահալլէք՝ Վ. Կիւմիւշեան։ Ցերի գիւղք՝ Ե. Սուրէնեան։ Դուրուչեշմէք՝ Վ. Դաբամաճեան։ Սան-Սթեֆանոյք՝ Զ. Մերկերեան։ Սազլը Աղաճի Մխիթարեանք՝ Վ. Պէրպէրեան։ Նաեւ՝ Գ. Ցովակիմեան, Ս. Սարգիսեան, Ս. Շալճեան։

Պանտրմայք՝ Ղ. Ցովհաննեան և Ց. Արզումանեան։

Նիկոմիդիայք՝ Ա. և Մ. Փափազեան եղբարք։

Իզմիրի Ս. Մեսրոպեան վրժ.էն՝ Գ. Տ. Ցաբէթեան։

Ատանցմէ վիճակը չահեցան Օրթագիւղէն Էլիզա Վարդանեան, որ Օ. Արզուման հրատարակութենէն կ'ստանայ Մնչ պէտք է գիտնայ դեռատի աղջիկ մը՝ և Պէշիկթաշէն Հ. Պողոսեան, որ կ'ստանայ Տրէզեանի Հաշուեգիրքը։

«ԾԱՂԻԿ» ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Անաւասիկ ցանկը անցած ամիս այլեւայլ վարժարաններու բոլոր դասարաններուն մէջ Ա. Բ. Գ. հանդիսացող աշակերտներուն և աշակերտուհիներուն։

ԷՍԱԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.— Աղջկանց Ե. կարգք՝ Ա. Մաւի Թիւլպէնտճեան, Բ. Տիգրանուհի Հանէսեան և Սաթենիկ Վարդանեան։ Գ. Սիրվարդ Շահպազ։

ՆԵՍԱՐԻՈՑ ՅԱԿՈԲԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ.— Ներկայ շրջանին ամէն ամիս Ա. հանդիսացած են ուսումնարանի Ա. կարգէն՝ Հրանտ Մերտինեան ։ Նախակրթարանի Զ. կարգէն՝ Յարութիւն Փիլիպոսեան, Ե. կարգէն՝ Հայկ Գալփաքեան ։

ԹՐԻՊՕԼԻԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ.— Զ. դասարանէն՝ Համբարձում Ճէօմէրտեան և Գէորգ Ճէօմէրտեան ։

ԳԱՍԹԷՄՈՒՆԻԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ.— Մանչերու Ա. կարգէն՝ Ա. Պօղոս Էրզրումլեան, Բ. Յարութիւն Նագգաշեան, Գ. Վահրամ Ինճէճեան և Գրիգոր Գարապաճեան ։ Աղջկանց Ա. դասէն Ա. Վերժին Թօփաքեան, Բ. Արմէն Սւագեան, Գ. Ֆիլօր Զամպագճեան ։

ՔԻՐՄԱՍԹԻԻ ԹՈՐԳՈՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.—Ե. կարգէն Ա. Յարութիւն Տիւզեան, Բ. Յովհաննէս Հէքիմեան, Գ. Ալեքսան Աճէմեան ։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՌԵՒՏՐ. ՎԱՐԺԱՐԱՆ.— Գ. կարգէն՝ Ա. Սարգիս Անսուրեան, Բ. Զարեհ Կիւմիւշկէօզեան, Գ. Պերճուհի Անսուրեան ։

ՍԻՄ. ՀԱՃԻ ԳԻՒՂԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ.— Միջին Բ. կարգէն՝ Ա. Կարապետ Չէօրէքճեան, Բ. Հայկ Եղեկիէլեան, Գ. Սարգիս Պէքճեան ։

(Շարունակելի)

ԱՅՍՕՐ ԿԱՐԴԱՑԷՔ ՆԱԵՒ ՄԵՐ ԿՈՂՔԸ

Ցաւօք կը ծանուցանենք թէ Կիւլպէնկեան գերդաստանը իր երիցագոյն անդամուհին կորսնցնելու դժբաղդութիւնը ունեցաւ, յանձին ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻ, կողակից հանգուցեալ Սարգիս էֆ.ի ։ Հանգուցեալը ազնուաբարոյ, բարեսիրտ, կրթասէր Տիկին մըն էր, բարի մայր մը և գորովալից մեծ մայր մը որ ամէն առթիւ չէր զլանար իր նպաստը՝ կարօտներու համար ։ Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ անցած ուրբաթ օր մեծ շուքով և խուռն բազմութեան մը ներկայութեան Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցիին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, որ շրջապատուած էր Պոլսոյ բարձրաստիճան եկեղեցականներու խումբէ մը ։ Արարողութիւններէն ետք հանգուցեալ տիկինը փոխադրուեցաւ Ազգ. Հիւանդանոց ուր ամփոփուեցաւ Կիւլպէնկեան դամբարանին մէջ ։ Իր զաւակները այս առթիւ 300 ոսկիի նուիրատուութիւն մը ըրին նոյն Հաստատութեան ։

Ծաղիկի Տնօրէնութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ ողբացեալին վշտակիր զաւակներուն ։

Արտօնատէր Ա. ՍԱԳԱԵԱՆ   ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱԵԱՆ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Անցեալ շրջանէն պարտք չունեցող մեր բաժանորդներուն կը շարունակենք Ծաղիկ ղրկել։ Սակայն կը խնդրենք իրենցմէ մեզի անմիջապէս տեղեկացնել թէ հա՞րկ է շարունակել թերթերը և ուղարկեն իրենց նոր բաժնեգինը։ Այն բաժանորդները որ մինչեւ 5րդ թիւը լուր չեն տար մեզի, այլեւս թերթ չպիտի ստանան։ Անկէց ետք պիտի դադրեցնենք իրենց թերթերը։

×

Կը խնդրենք այն բարեսիրտ անձնաւորութիւններէն որոնք անցած տարի Ծաղիկ նուիրած էին զանազան գաւառական և պոլսական վարժարաններու, մեզի տեղեկացնել թէ պէ՞տք է շարունակենք թերթերը նոր շրջանին մէջ ալ։

ԳԱՒԱՌՆԵՐԷՆ ԵՒ ՊՈԼՍՈՅ ԳԻՒՂԵՐԷՆ մեր հանելուկները լուծողներուն կը ծանուցանենք որ կտրօնը կամ պատասխանը պարունակող պահարանին բերանը չփակցնեն և բաց ձգեն. այն ատեն 5—10 փարայով միայն կու գայ և հարկ չի մնար 20 կամ 40 փարայի դրոշմ փակցնելու նամակին։

ՈՍԿԵՐՉԱՏՈՒՆ

"ՔՐԻՍԹՕՖԼ,,

ՄԻ ՄԻԱՅՆ ՄԷԿ ՀԱՏԻԿ ՏԵՍԱԿ

ԱՄԵՆԱԼԱՒԱԳՈՅՆ

ՁԱՅՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ

Այս մարքան եւ «ՔՐԻՍԹՕՖԼ» անունը

Ամեն մեկ կտորին վրայ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԱՒՈՐ ՄՐՑՈՒՄ

Ծաղիկ դպրոցներու մէջ ուսումնական առաջդիմութիւնը զարգացնելու համար բացած է պարգեւաւոր մրցում մը։

Որոշեց մասնաւոր մրցանակներ տալ այն ամէն ուսանողներուն որոնք ամբողջ տարուան մը միջոցին աշխատասիրութեան և ուսմանց մէջ առաջ անցած են իրենց ընկերակիցներէն։

Մրցանակին մասնակցելու իրաւունք պիտի ունենան Պոլսոյ և Գաւառներու վարժարաններուն ԲԱՐՁՐԱԳՈՅՆ՝ այսինքն Երջանաւարտ կարգերը, և անկից անմիջապէս վար եկող միւս ԵՐԿՈՒ ԿԱՐԳԵՐԸ, այսինքն մեր Թաղային վարժարաններուն վրայ չափելով՝ բարձրագոյն երկրորդ, բարձրագոյն առաջին և միջին երկրորդ դասարանները, կամ ազգային վարժարաններէն դուրս միւս նախակրթական վարժարաններուն վերէն սկսելով Ա. Բ. և Գ. դասարանները։ Այսպէս, այս երեք դասարաններէն տարեկան քննութեանց մէջ ԱՌԱՋԻՆ հանդիսացող ուսանողներէն և ուսանողուհիներէն ՏԱՍԵՐԿՈՒ ՀՈԳԻ հրապուրիչ և գեղեցիկ մրցանակներ պիտի ստանան։

Ահաւասիկ մրցանակները.—

1. ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ. (Այս ժամացոյցը հանրածանօթ ՄԷՐՃԱՆՕՖ վաճառատան բերել տուած իւպաղ անուն «Օքսիտէ» տեսակէն է, որուն բանալիւր քարի վրայ կը դառնայ)։
2. ՆԻՔԷԼԷ ԶԱՐԴԱՐՈՒՆ ԿԱՂԱՄԱՐ ՄԸ, ապրանք հանրածանօթ Ռոման թղթավաճառատան, Կալաթա։
3. ՈՍԿԵԶՕԾ ԿԱՂԱՄԱՐ ՄԸ։
4. ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ, օնիքս, ապրանք ծանօթ յանձնակատարվաճառական Էտուար Լութֆեան էֆ.ի, Պէօյիւք Միլլէթ խան, Կալաթա։
5. ՊՐՕՆԶԷ ԱՐՁԱՆՈՎ ԿԱՂԱՄԱՐ ՄԸ, ապրանք՝ Բերայի Պազար տ'Աթէն վաճառատան, Աղաճամի, Բերա։
6. ՆԻՔԷԼԷ ԿԱՐԿԻՆԻ ԳԵՂԵՑԻԿ ԿԱԶՄԱԾ ՄԸ, ամբողջ մանրամասնութիւններով, ապրանք՝ Լէօֆլէր տպարան-թղթավաճառատան, Թիւնէլի մօտ, Բերա։
7. ԿԱՐԿԻՆԻ ԱՄԲՈՂՋ ԿԱԶՄԱԾ ՄԸ, դեղին մետաղէ։
8. ԿԱՐԿԻՆԻ ԱՄԲՈՂՋ ԿԱԶՄԱԾ ՄԸ, դեղին մետաղէ։
9. ԿԱՂԱՄԱՐ ՄԸ ՊԱՖՕՆ ՑԱՏԱԿՈՎ։
10. ՆԵՐԿԻ ԿԱԶՄԱԾ ՄԸ։
11. ԿԱՂԱՄԱՐ ՄԸ։
12. ԿԱՂԱՄԱՐ ՄԸ։

Որոշած ենք նաև հրատարակել Պոլսոյ և Գաւառի վարժարաններուն բոլոր կարգերուն մէջ, ամէն ամիս Ա. Բ. և Գ. հանդիսացող աշակերտներուն և աշակերտուհիներուն անունները։

Այս մրցումներուն մանրամասնութեանց համար կարդալ Ծաղիկի 47 թիւը։

Լուծում թիւ 3 հանելուկին եւ հարցումին.